ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Արտահերթ 1

23 մայիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 32 անդամներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Ղուկասյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը:
Ավագանու նիստին մասնակցում էին՝
ԶԼՄ ներկայացուցիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

ԼՍԵՑԻՆ

1. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԳՈՐԾՈՂ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 116-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 13-րդ, 14-րդ կետերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով հավելվածի 4-րդ կետի, 8-րդ կետի 2-րդ, 9-րդ կետի 1-ին և 3-րդ, 16-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթները, Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսին Զ/396, Զ/415, Զ/424 6183, 6386 թվագրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի

ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի» խորհրդակցական մարմին (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին):
2. Հաստատել Խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

2. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 116-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 13-րդ, 14-րդ կետերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով հավելվածի 4-րդ կետի, 8-րդ կետի 1-ին, 9-րդ կետի 1-ին և 3-րդ, 16-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթները, Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսին Զ/396, Զ/415, Զ/424, 6183, 6386 թվագրումներով)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմին (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին):
2.Հաստատել Խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

3. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԳՈՐԾՈՂ «ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՐՑԵՐԻ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ*

ՄԱՐՄԻՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 116-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 13-րդ, 14-րդ կետերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով հավելվածի 4-րդ կետի, 8-րդ կետի 2-րդ, 9-րդ կետի 1-ին և 3-րդ, 16-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթները, Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսին Զ/396, Զ/415, 6183, Զ/424 թվագրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի» խորհրդակցական մարմին (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին):
2. Հաստատել Խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

4. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԼԵՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեում նախատեսել և բյուջեի հաստատումից հետո հատկացնել 16 290 520 (տասնվեց միլիոն երկու հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ 2025 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Սահմանել, որ՝

1) մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար կիրառելի են բյուջետային օրենսդրությամբ սահմանված բոլոր գործառնական ոլորտները

2) քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

3. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ,

ներառել համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

5. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ 18 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԼԵՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրի համայնքի երկրորդային 18 փողոցների հիմնանորոգում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:
2.Սահմանել, որ
1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2 291 334 200 (երկու միլիարդ երկու հարյուր իննսունմեկ միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից համայնքի ներդրման մասնաբաժինը կազմում է 1 260 233 810 (մեկ միլիարդ երկու հարյուր վաթսուն միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ՝
2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

ԼՍԵՑԻՆ

6. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԼԵՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի տրանսպորտային պարկի համալրման նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրի համայնքի կարիքների համար անհրաժեշտ տեխնիկաների և գույքի ձեռքբերում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ
1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 170 235 194 (մեկ հարյուր յոթանասուն միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որից համայնքի ներդրման մասնաբաժինը կազմում՝ 93 629 356 (իննսուներեք միլիոն վեց հարյուր քսանինը հազար երեք հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թ. բյուջեի 6/4/1 գործառնական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և այլ սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից,
2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 31-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց N 162 հասցեի անշարժ գույքը աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 31-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-14

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

8. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 140-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի
28 ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Գորկու փողոց N 17 հասցեի անշարժ գույքը աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 140-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

9. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԿԱԹԳԾԻ ԹԱՂԱՄԱՍ N 62/4 ՀԱՍՑԵԻ 161,59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երկաթգծի թաղամաս N 62/4 հասցեի 161,59 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ հիսունիններ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն էլեկտրոնային կադաստրային քարտեզի, հանդիսանում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողամաս: Նշված հողամասը վերագրանցելու նպատակով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի քաղաքի Երկաթգծի թաղամաս N 62/4 հասցեի 161,59 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ հիսունիններ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագծին, որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով, նկատի ունենալով, որ օտարվող հողամասերը չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի կողմից նվիրատրված հանրային բնակելի ֆոնդի տների պահպանման ու սպասարկման համար զբաղեցված համայնքապատկան հողերը օտարել ուղղակի վաճառքի միջոցով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայանքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

ԼՍԵՑԻՆ

12. ՎԻԿՏՈՐՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՆՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱԴՐԻԱՆԱ ՄԱՆՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԲԱԺՆԵՄԱՍԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՇԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Վիկտորյա Խաչատուրի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բաժնեմասային սեփականության իրավունքով իրեն՝ (երկու երրորդ մասով) և դուստրերին՝ Սուսաննա Մանվելի Կարապետյանին (մեկ վեցերորդ մասով) ու Ադրիանա Մանվելի Կարապետյանին 1/6 (մեկ վեցերորդ մասով) պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆԶ Ցե 180» (MERCEDES-BENZ C 180) մակնիշի տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) (հիմք՝ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 06XX325057) գույքահարկի 2021 թվականի օգոստոս ամսից մինչև 2025 թվականի հունիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Տրանսպորտային միջոցը հանդիսացել է Վիկտորյա Խաչատուրի Հովհաննիսյանի և նրա ամուսնու՝ Մանվել Արծրունու Կարապետյանի (հիմք՝ ամուսնության վկայական N 122073) համատեղ սեփականությունը: Մանվել Արծրունու Կարապետյանը եղել է Պաշտպանության Բանակի 33651 զորամասի զինծառայող, փոխգնդապետ և մասնակցել է 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմին և զոհվել է մարտական գործողությունների ժամանակ (հիմք՝ մահվան վկայական ԲԱ308453, Հայաստանի Հանրապետության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության 2021 թվականի հունիսի 15-ի N 36/3837, N 36/3838, N36/3839 տեղեկանքները), իսկ տրանսպորտային միջոցը մնացել է գյուղ Մատաղիսում (Թալիշում)՝ հակառակորդի վերահսկողության տակ (հիմք՝ տեղեկանք՝ տրված ՊԲ 33651 զորամասի շտաբի պետի-հրամանատարի տեղակալի կողմից, տեղեկանք՝ տրված համայնքային ոստիկանության Մուշի բաժնի պետի՝ ոստիկանության փոխգնդապետի կողմից): Մանվել Արծրունու Կարապետյանի մահից հետո տրասնսպորտային միջոցը երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի քսանութին հաստատվել է Վիկտորյա Խաչատուրի Հովհաննիսյանի անվամբ՝ համաձայն սեփականության իրավունքի վկայագրի, հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի նոտարական տարածքի նոտար Քրիստինե Սամվելի Մարտիրոսյանի կողմից երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի քսանութին, գրանցված սեղանամատյանում թիվ 398 (հիմք՝ սեփականության իրավունքի վկայագիրը) և ենթակա է հաշվառումից հանման:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Վիկտորյա Խաչատուրի Հովհաննիսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Պարույր Սևակի փողոց 5 շենք, բնակարան 5 հասցեում, անձնագիր՝AT0559435, տրված՝ 2020թվականի սեպտեմբերի 07-ին, ոստիկանության 034-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 6405930564) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի մայիսի 02-ին N5500 թվագրմամբ)՝ **Հայաստանիր Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Վիկտորյա Խաչատուրի Հովհաննիսյանին, Սուսաննա Մանվելի Կարապետյանին և Ադրիանա Մանվելի Կարապետյանին բաժնեմասային սեփականության իրավունքով իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի

գույքահարկի 2021 թվականի օգոստոս ամսից մինչև 2025 թվականի հունիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով 2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ գույքահարկի 86.290 (ութսունվեց հազար երկու հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 71.683 (յոթանասունմեկ հազար վեց հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 14.607 (տասնչորս հազար վեց հարյուր յոթ) ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիկտորյա Խաչատուրի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-32 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

13. ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել «Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբ» հայրենասիրական, բարեգործական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) նախագահ Ժորա Աբգարյանը՝ կազմակերպությանը (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 05547574, գրանցման հասցեն՝ քաղաք Գյումրի, Սարգսյան փողոց 2-րդ նրբանցք տուն 17) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված (հիմք՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի N 141-Ա որոշում) Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 20 հասցեի 1 (մեկ) հեկտար մակերեսով հողամասի 2025 թվականի անշարժ գույքի հարկի նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունն իր աշխատանքային գործունեության ընթացքում չունի ֆինանսական հատկացումներ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով կազմակերպության նախագահ Ժորա Աբգարյանի 2025 թվականի մայիսի 02-ի N 033Ա դիմումը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսի 02-ին N5510 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել արտոնություն կազմակերպությանը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N20 հասցեի հողամասի 2025 թվականի անշարժ գույքի հարկի վճարման նկատմամբ, ազատելով ընդամենը անշարժ գույքի հարկի 140.828 (մեկ հարյուր քառասուն հազար ութ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության նախագահին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ավագանու անդամներ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ

Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ք.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լ. Գ.ԱՆԱՆՅԱՆ

Շ. ԱՐԱՄՅԱՆ

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ

Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ

Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի
2025թ. մայիսի 23